ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ՈՒԽ նախագահի նախընտրական ծրագիր

Մադաթյան Լուիզա

Տնտեսագիտության ֆակուլտետ

Ֆինանսներ (ըստ ոլորտի)

Տնտեսագիտության ֆակուլտետի նախագահ (ԵՊՀ ԻՄ ՈՒԽ)՝ 2018-20 թթ.

Տնտ. ֆակուլտետի նախագահի տեղակալ (ԵՊՀ ԻՄ ՈՒԽ)՝ 2017-18 թթ.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ Իջևանի ավագ դպրոց

luizamadatyan1999@gmail.com

Բարև Ձեզ, Ես Լուիզա Մադաթյանն եմ և առաջադրվում եմ ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական խորհրդի նախագահի թեկնածու: Այս ծրագրում ներկայացված են ՈՒԽ-ի տեսլականը՝ ըստ իս: Որոշ ծրագրեր կախված են երկրում տիրող արտակարգ դրությունից և համալսարանի առցանց աշխատանքից:

Նպատակներ՝

- պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,
- լուծել ուսանողներին հուզող խնդիրները,
- ապահովել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը,
- ներկայացնել ուսանողությանն առնչվող հարցեր,
- իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին,
- աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը
- մասնակցել ԵՊՀ ԻՄ տարածքում ներքին կարգապահության պահպանմանը

Մոտակա ծրագրեր՝

- Թվայնացնել Ուխ տվյալները

  Շարժվենք ժամանակին ընդհառաջ Տեսնենք քայլ առ քայլ Նախկին դիմում-հայտերը դարձնել, իսկ նորերը նախորոք կազմել թվային Փաստաթղթերը /արձանագրություններ, տեղեկանքներ.../ վարել առցանց կախված նաև համաճարակային իրավիճակից Իսկ հետագայում եթե հաղթահարած լինենք՝ սկանավորել Ընտրությունները կազմակերպել առցանց Կազմել թափուր պաշտոնների հայտեր և կազմակերպել առցանց քասթինգ

- Վերանայել ակտիվության սանդղակը

  Նախ կրկնահաշվարկից խուսափելու համար, հետո հաշվի առնելով համապատասխան ակտիվության կարևորությունը (օր.՝ գիտաժողովներին մասնակցությունը) ուսանողական խորհրդի համար անհրաժեշտ է վերանայել

- Ստեղծել ակումբներ

  Մենք ունենք տարբեր հետաքրքրություններ ունեցող ուսանողների բավականաչափ ռեսուրսներ, որոնց կարող ենք միավորել օրինակ ֆիլմամոլների, գրքասերների, տարբեր սպորտաձևերով հետաքրքրվածների, արվեստասերների ակումբների ներքո Կարող ենք կազմակերպել նաև առցանց տարբերակով

- Ստեղծել ֆակուլտետային պատի թերթեր

Քանզի չունենք բավականաչափ ռեսուրսներ ստեղծելու մեր ուսանողական ամսագիրը, ապա կարող ենք ՈՒԽ-ի հայտարարությունները, նորությունները, բացի առցանց տարբերակներից, նաև տարածել ֆակուլտետային նորությունների պատի միջոցով՝ մեր լոգոտիպով և դիզայնով:

- Ստեղծել նոր ծառայություն՝ «Հարց տուր #ԻՄՈՒԽ-ին»

  Ուսանողների մոտ ծագում են շատ հարցեր, որոնց պատասխանը կարող են ստանալ սրա միջոցով

- Կազմակերպել սեմինարներ/թրեյնինգներ

  Ուսանողների մոտ նոր հմտություններ ստեղծել և հները զարգացնել կարող ենք կազմակերպել տարբեր տեսակի սեմինարների միջոցով

- Կազմակերպել ծրագրեր դպրոցների հետ՝ համագործակցելով ԵՊՀ ԻՄ համապատասխան ստորաբաժանման հետ Կազմակերպել ընդհանուր ծրագրեր դպրոցների հետ Դպրոցականներին

  ծանոթացնել ուսանողական կյանքին, օգնել ճիշտ մասնագիտական ընտրություն կատարել, և ի վերջո ստեղծել ապագա կադրեր մեզ համար

- Ստեղծել «Լավագույն ֆակուլտետ»-ի գավաթ

  Տարբեր չափորոշիչների և մրցույթների միջոցով ընտրել տարվա լավագույն ֆակեուլտետը և, բնականաբար, տալ մրցանակ

- Կազմակերպել սոցիարցումներ և գնահատել ինքներս մեզ

  Ամենամսայա նախագահության անդամները կգնահատեն միմյանց և կորոշեն ամսվա կամ եռամսյակի լավագույն աշխատածին, որի միջոցով նաև մոտիվացնում ենք ինքներս մեզ Հոդված տեղադրել կայքում և ֆակուլտետային պատին կցել լավագույնի մասին Նաև անհրաժեշտության դեպքում ընտրել ամենամոտիվացված նոր ուխական Սոցիարցումների միջոցով կհասկանանք ուսանողների մոտիվացիան, կարծիքը, կստանանք նոր գաղափարներ, կշտկենք մեր թերությունները

- Կազմակերպել բաց դռների օր

  Խոսքը գնում է «ՈՒսանողական ուղեցույց» ծրագրի մասին, որի անունը, ըստ ինձ, ենթակա է փոփոխության Այն ամենայն հավանականությամբ կկազմակերպենք առցանց Zoom հավելվածի միջոցով, ուսանողների տվյալները, ինչպես միշտ, կվերցնենք մասնաճյուղից

- Բացահայտել համալսարանական տաղանդներին

  Ծրագրերի, հայտերի, սոցիարցումների միջոցով գտնենք մեր նոր տաղանդներին և համալրենք մեր ռեսուրսները

- Զբաղվել ռազմահայրենասիրական գործունեությամբ

  Կարևոր է ուսանողի մոտ բարձր պահել ռազմահայրենասիրական ոգին Կարող ենք կազմակերպել մշակութային և կրակային միջոցառումներ, այցեր և այլն

- Խնջույքներին տալ կրեատիվություն

  Դարձնենք ավելի հետաքրքիր ուսանողական խնջույքները Այսինք յուրաքանչյուր հավաքույթ, խնջույք ունենա իր ոճը՝ ռետրո, խաղային, լուսային, նեոնային, խորհրդանշի որևէ ժամանակաշրջան և այլն

- Հիմնել փոքրիկ ուսխորհրդական բիզնեսներ

  Կարող ենք կազմակերպել միջոցառումներ՝ վաճառել ուսանողների դիզայներական, գիտական գործերը, ժամանակավոր սրճարաններ հիմնել, մատուցել բազմապիսի ծառայություններ՝ հիմնելով մեր ֆոնդը

- Ստեղծել ուսանողական հանգստի սենյակ

  Վերանորոգել ՈՒԽ սենյակը համալսարանական և ներգրավված միջոցների հաշվին: Ստանալ ժամանակակից մոտիվներով, հարմարություններով կենտրոն: Իհարկե անել ՈՒԳԸ-ի հետ համատեղ, որովհետև սենյակը նաև նրանցն է:

Շնորհակալություն ուշադրության համար

Ուրախ կլինեմ լսել Ձեր հարցերը և մաղթանքները

Հարգանքով՝
Լուիզա Մադաթյան,
luizamadatyan1999@gmail.com